«ԻՄԱՄ ՋԱՖԱՐԻ» ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԸ (XVII—XVIII դարեր)

Հայաստանի ինչպես արեմտյան, այնպես էլ արևելյան մասերում էթնոդավանական իրադրության վրա զգալիորեն մեծ էր օտար տիրապետողների կողմից վարվող տնտեսական քաղաքականության ազդեցությունը։ Հայ բնակչության ոչ բռնի եղանակով մահմեդականացման ընթացքը իրականացվում էր տնտեսական լծակների միամրոզ համակարգի օգնությամբ։ Արևմտյան Հայաստանում, ի թիվս այլ լծակների, հատկանշական էր նաև թուրքական «ֆութուվվաթի» քաղաքականությունը, երբ «թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում հայ արհեստավորները, իրենց արհեստներն ի գործ դնելու իրավունքին տիրանալու համար, բռնադատվում էին իսլամների հետ միասին անդամակցելու թուրքական արհեստավորական միավորումներին, իսկ անդամակցելու համար՝ նրանց նման ենթարկվում էին իսլամական սահմանված ծիսակատարություններին և այդ միջոցով՝ իսլամություն ընդունելու թելադրանքներին»[1]։

Արևելյան Հայաստանում տնտեսական միջոցառումների նման համակարգ էր «Իմամ Ջաֆարի» անունով հայտնի օրենքը, համաձայն որի մահմեդականություն ընդունած նախկին քրիստոնյան իրավունք էր ստանում լիովին ժառանգելու իր քրիստոնյա ազգակիցների ողջ ունեցվածքը, անկախ ազգակցության աստիճանից[2]։ Օրենքը գործադրության պարարտ հող գտավ ոչ միայն ունևոր խավերում (առանձին հայ ֆեոդալական տների ներկայացուցիչներ, հոգևորականություն, առևտրավաշխառուական դաս և այլն), այլև պարսկական տեղական իշխանությունների վարած դաժան հարկային քաղաքականության հետևանքով ունեզրկված հայ աշխատավորական խավերում։ Տնտեսապես քայքայված, ունեզուրկ հայ աշխատավորը ստիպված դիմելով դավանափոխության, ոչ միայն ազատվում էր կրոնական հալածանքներից, այլև հնարավորություն էր ստանում տեր դառնալու մի շարք ընտանիքների ունեցվածքին։ Շղթայական ռեակցիայի նման տարածվելով, օրենքը աղճատում էր հայ միջնադարյան բազմանդամ ընտանիքի, համայնքի դավանական և դրանով իսկ՝ ազգային դիմադիմը։ Ունևոր ընտանիքներն իրենց աղքատ ազգականների կողմից լարվող որոգայթներից ունեցվածքը փրկելու համար հաճախ ստիպված էին դիմել պայքարի ամենապասիվ ձևերից մեկին՝ արտագաղթին։ 1670-ական թթ. վերջին Հալեպում, Լյուդովիկոս XIV-ի հյուպատոս Պիկեին՝ մահմեդականների հալածանքներից փրկելու խնդրանքով դիմած Նախիջևանի հայ դոմինիկյան համայնքից երկու կրոնավոր վկայում էին, որ «իրենց հոտից շատ հավատացյալներ էին անցնում մահմեդականների կողմը, և որ այդ կողմերում (այսինքն Նախիջևանում—Մ. Կ.) շահի գործակալները անհավատալի զեղծարարությունների էին դիմում քրիստոնյաների նկատմամբ։ Եթե քրիս-

---

1 Հ. Ս. Անասյան. Թուրքական ֆութուվվաթը և հայերը (Օսմանյան կայսրության ձուլողական քաղաքականության պատմությունից). Վիեննա, 1985, էջ 8։

2 Օրենքի պաշտոնական ձևակերպումը պարսկական և եվրոպական աղբյուրներում տե՛ս Հ. Փափազյան. Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը.— «Բանբեր Մատենադարանի», 3, Երևան, 1956, էջ 89—91· Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. 1, Հրովարտակներ, պրակ երկրորդ (1601—1650 թթ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 16, էջ 101—103; Les six voyages de Jean Baptiste Tavernier, ecuyer baron d'Aubonne, en Turquie, en Perse, et aux Indes. T. I, Paris, 1679, p. 510; R. du Mann. Estat de la Perse en 1660. Publiée avec notes et appendice par Ch. Schefer. Paris, 1890, p. 46—47; G. Chinon. Relation nouvelles de Levant. Lyon, 1671, p. 292—294; Bedik Petrus. Cehil Sutun. Viennae, 1678, p. 366—368; Poullet. Nouvelles relations du Levant. Paris, 1668, p. 283—285; Sanson. Voyage ou relation de l'état present du royaume de Perse. Paris, 1695, p. 199—202.

տոնյաններից որևէ մեկը,—ասում էին նրանք,— այնքան խեղճ է, որ ուզում է մահմեդական դառնալ, *նա, նախ տիրանում է իր ընտանիքի ամբողջ ունեցվածքին և այդ իրավունքը հրեշավոր կերպով տարածում է իր մոտիկ ազգականների բոլոր ընտանիքների վրա, մի բան, որը ինչպես Դուք արդեն պետք է հասկանաք, ահավոր վշտի տեղիք է տալիս։ Ու դրան հետևում է այն, որ* ընտանիքի ղեկավարները փախուստի էին դիմում, *իրենց հետ տանելով այն ամենը, ինչ կարող էին տանել, թողնելով այնտեղ կանանց ու երեխաներին»*[3]։

Վկայությունները ցույց են տալիս, որ եթե փոքր չէր ունևոր դասից այն անձանց թիվը, ովքեր վերոհիշյալ օրենքի հետևանքով հարկադրված էին մահմեդականանալ, ապա փոքր չէր նաև այն մարդկանց թիվը, որոնք, չցանկանալով մահմեդականանալ, թողնում էին ընտանիքն ու լքում հայրենի վայրերը։ Այս առիթով ուշագրավ է Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի (1715—1725) 1721 թվագրված մի կոնդակը, տրված «տանդ յունաց ղետեղեալ յարևելեան վաճառականացդ», որոնց նա կոչ է անում, թե «չու արարեալ եկէք իւրաքանչիւր բնակութիւնս և հայրենական երկիրս անահ և անկասկած յումեքէ», քանի որ Թահմազ II շահը «հաստատ յառաղամ է շաֆաղաթ արեր, թէ հէրկահ թուրքացածի տավան տինկլեմիշ չի լինի, ով ոք որ թուրքանայ իւրն հաւատ կու հասանի. այլ ազգականէն ապրանք տավու չի առնէ»։ Հաշվի առնելով կոնդակի կարևորությունը ոչ միայն էթնոդավանական պրոցեսների ուսումնասիրման համար, բնագիրը բերում ենք ամբողջությամբ[4].

«Քրիստոսի ծառայ տէր Աստուածատուր կաթողիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Վաղարշապատու լուսակառոյց և տիրանկար սրբոյ և մեծի գերագոյն Աթոռոյս Էջմիածնի:

Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական՝ հանդերձ աստուածային բազմապատիկ օրհնութիւն և նախախնամութեան գրութիւն ի վերայ օրհնեալ տանն Յունաց գետեղեալ յարևելեան վաճառականացդ՝ խնդալ ի տէր Յիսուս Քրիստոս աստուածն ամենայնի միշտ և հանապազ ամենայն ժամու, ամէն:

Շնորհք ընդ ձեզ և երկնաւոր խաղաղութիւն յաստուծոյ հօրէ ամենակալէ գթութիւն և ող[որմութիւն] ի նորին իսկականի բանին էականի նոյնազօրի, սէր և քաղցրութիւն համապատուի նոցին ամէնազօր սուրբ հոգւոյն կենարարի իջցէ և հանգիցէ ի վերայ ձեր, եկեսցէ և բնակեսցէ առ ձեզ՝ իբրև զյորձանս գետոց և որպէս զվտակս աղբերաց անսպառ խաղաղացմամբ և առատապէս ծաւալմամբ, ընդ որոյ հովանաւորութեամբն զօրասջիք և պահպանեսջիք, նախախնամեսջիք և կառավարեսջիք կրկին զոյիւք երկակի կենօք, պարզ մտօք, ինքնայօժար կամօք, յամերաւք ժամանակօք և պարագայց ամօք. կալ մնալ ձեզ, ամէն:

Այլ և օրհնութիւն հօր, պահպանութիւն որդւոյ և նախախնամութիւն ամէնասուրբ հոգւոյն առ ձեզ եկեսցէ և լցուսցէ զձեզ փառօք պատուօք և արգասալիր հոխութեամբ՝ իբրև զորթս և զոստըս սաղարթախիտ և պտղալից դրախտ անկեալ ի զնացս հոգւոյն վտակաց կալ մնալ ձեզ խաղաղական կենօք, ամէն:

Եւ շնորհազեղուն և աստուածապարգև օրհնութեանս ծանուցումն լիցի վերոյ գրեալ մեր

---

[3] G. Goyau. Un précurseur: François Picquet. Consul de Louis de XIV en Alep et évêque de Babylone. Paris, 1942, p. 238—239. *Նման եղանակով մահմեդականացածների թիվը միայն 1629—1654 թթ. ըստ «բոկոտն» կարմելիտների հաշվումների կազմում էր մոտ 50000 մարդ (տե՛ս* A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries. Vol. I, London, 1939, p. 288). *Վերոբերյալը, մեր կարծիքով, որոշ պարզություն է մտցնում ֆրանսիական հյուպատոս Պիկեի այն հայտարարության մեջ, թե Նախիջևանում մահմեդականությունն արմատավորվել է «բռնությամբ» (տե՛ս* Fr. Picquet. La vie de Messire François Picquet consul de France et de Hollande à Alep. Paris, 1732, p. 391)

[4] *Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 244, վավ. 255, 1 թերթ։ Հակառակ երեսին, հավանաբար Սիմեոն Երևանցու ձեռքով, ավելացված է. «Կոնդակ Աստուածատուր կաթողիկոսի վասն հայոց, որք լինին մահմեդականք ի թուին Հայոց ՌՃՀ նոյեմ. Ժ(10), փրկչական 1721»։*

սիրելի և հարազատ որդւոցդ մօրս լուսոյ սուրբ Էջմիածնի, այսինքն արևելեան վաճառականացդ, որք գետեղեալ էք ի տունս Յունաց ուր ուրէք, վասն զի հրամայէ իմաստնացեալն յաստուծոյ Սողոմոն ասելով թէ՝ Սիրտ թագաւորաց ի ձեռին աստուծոյ է. ում որ կամի խստանայ, ում որ կամի՝ քաղցրանայ*: Ահա աստուծով որ սարգ արինք ղօլվաթլու,,,, ճէտիլիսլամի կողմանէ. աստուած թագաւորին մէկ օրն Ռ (1000) անէ, իւր թագաւորութեան վերա հաստատ կենայ. ըստ մեր ես մաթլապին քէսկուն և հաստատ յուսում է շաֆաղաթ արեր, թէ ճէրկահ թուրքացածի ասվան տինկլէմիշ չի լինի. ով ոք որ թուրքանայ իւրն հաւատ կու հասանի. այլ ազգականէն աղրանք տավու չի առնէ, մանաւանդ որ յԵրևանու օլքի վերա եղեալ թաֆայութի հէզիէն ԵՃՁ (580) թումանն, զայն ես, ըստ մեր յարգին, պախշել է, թէսէտոխ արեր է, որ այլ պինպաթ ուզեն ոչ: Երկուսի յոաղամն այլ եկն առ մեզ. ահա ձեր աչքն այլ ի լոյս, մեր աչքն այլ. ըստ ասացելումն, թէ՝ Աչք մեր յիսնաւոր տէր արար զայս և է սքանչելի յաչս մեր**, վասն որոյ ամենեքեանքդ ուրախ լերուք, որ այսպիսի ծմեռնացեալ ժամանակին աստուած ողորմութիւն արար տառապեալ ազգիս Հայոց:

Սրբոյ Գրիգորի մերոյ Լուսաւորչին կենդանի աղօթքն և մաղթանքն նորին մաքուր, վասն որոյ ի զալ գրոյս առ ձեզ ի լսելն զհամբաւս ա[յ]ս*** բարի ամենայն ոք զձեր սիրտն ուղղեցէ և չու արարեալ եկէք իւրաքանչիւր բնակութիւնս և հայրենական երկիրս անահ և անկասկած յումեքէ: Ահա մեր ղօլվաթլու խանն ես կրկնակի հուքմ տուաւ քօլլի յԵրևանու վերա և Նախջուանայ տանն հանդերձ խաս գեղերօքն որ այլ այս տավաս հէտիլ իսլամի լինի ոչ, մինպաթ հաստատելոց է աստուծով յամենայն ուրէք, այդպէս յիմացեք: Շնորհք տեառն ընդ ձեզ եղիցի ամենայն ժամու, ամէն:

Գրեցաւ ՌՃՀ (1721) թուականիս Հայոց, նոյեմբերի Ժ(10)

Առ դրանն սուրբ Էջմիածնի»:

Քննությունը ցույց է տալիս, որ ինչպես այս կոնդակում, այնպես էլ այլ աղբյուրներում մահմեդականացած հայը ներկայացվում է ինչպես «նոր մահմեդական» («չադիդ-ուլ-իսլամ»), այնպես էլ «թուրք», «քուրդ», «պարսիկ» և այլ տերմիններով։ Այսինքն, հաճախ հավասարության նշան էր դրվում ցեղանվան և դավանական պատկանելության միջև, իսկ երբեմն էլ միայն վերջինով էր պայմանավորված էթնիկական պատկանելությունը։ Այսպես, 1633 թ. հունվարի 18-ին Նախիջևանի Ապարաներ գյուղից Հռոմ հասցեագրած նամակում դոմինիկյան կրոնավոր (հետագայում՝ 1655—1664 թթ. Նախիջևանի հայ կաթոլիկական համայնքի եպիսկոպոս[5]) Պողոս Փիրոմալին հաղորդում էր. «Հայաստանում պարսիկները մի սովորություն ունեն. երբ որևէ քրիստոնյա դառնում է «թուրք». Նրա ազգականներին, մինչև յոթերորդ սերունդը ներառյալ, զրկում են սեփականությունից և ամեն ինչ տալիս են դավանափոխին»[6]։

Բերենք մի ավելի ցայտուն օրինակ. 1725 թ. հոկտեմբերի 28-ի նամակում, ուղղված Պետրոս 1-ին, Ղաբալայի վեց հայ գյուղերի ներկայացուցիչները, նկարագրելով թուրքական ռազմական զորամասերի վայրագությունները Արևելյան Անդրկովկասում, հաղորդում էին. «Մեր դեգերանքն թամամ և Շաքու երկիրն թուրքացրել էն ուժով: *Մեր գիր գրանքն և եկեղեցիքն այրեցին, մեր քահանայքն կոտորեցին. շատ մարդ վասն հաւատոյ խաթրին սուրով գնացին։ Հիմա* ցերեկն թուրքութիւնն էնք անում, գիշերն հայութիւնն, *այլ ճար չի ունիմք...* Մեր անունն որ Թուրք *է, գնում էնք Գանջայ սամանլուի մէլն, ղօշունի մէջն ման էնք գալիս, մեզանէ խոսկ չէն թաքցունում»[7]։*

Այսպիսով, տնտեսական այլ լծակների կողքին, «Իմամ Ջաֆարի» օրենքը կարևոր դեր էր խաղում հայ բնակչության հարկադրական մահմեդականացման գործում։

---

* *Հմմտ. Հռոմ. Թ, 18—19։*

** *Հմմտ. Սաղմոս, ՃԺէ, 23—24։*

*** *Թերթի պատռված և սոսնձված լինելու պատճառով բառի ընթերցումը այս մասում վերապահելի է։*

---

[5] *Փիրոմալիի մասին տե՛ս* M. A. van den Oudenrijn. Bishops and Archbishops of Naxivan.—Archivum Fratrum Praedicatorum. Vol. VI, Roma, 1936, pp. 176—180.

[6] A Chronicle of the Carmelites..., p. 288.

[7] Армяно-русские отношения в первой половине XVIII века. Сборник документов. Под ред. А. Иоаннисяна. Т. II, ч. II. Ереван, 1967, док. 324, с. 264; ср. док. 323, с. 263.

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ